

ՀԻՋԱԲՆ ԸՍՏ
ՄՈՐԹԵՁԱ ՄՈԹԱՀԱՐԻԻ

Աննա Գևորգյան

Բանալի բառեր՝ իրան, գենդերային հավասարություն, իսլամ, հիջաբ, կանայք, Մորթեզա Մոթահարի

20-րդ դարի քաղաքական իրադարձությունների համատեքստում քաղաքական իսլամի ասպարեզ գալուց հետո ակտիվանում է նաև քաղաքական իսլամի շրջանակներում կանանց դերի ու տեղի վերահիմնաստավորման գործընթացը¹: Քսաներորդ դարի սկզբից սկսած իսլամական մոդեռնիզմի ամենատարբեր ներկայացուցիչներ իրենց գործերում այս կամ այն չափով անդրադառնում են այնպիսի խնդիրների, ինչպիսին են «հիջաբի» թեման, բազմակնությունն ու կանանց դերակատարումը հասարակական-քաղաքական կյանքում²: Այս համատեքստում կանանց հիմնահարցերին են անդրադառնում նաև Իրանի շիա հոգևորականները՝ Ալամե Թաբաթաբաին, Ալի Շարիաթին, Մորթեզա Մոթահարին, Ռուհոլահ Խոմեյնին և այլոք³: Այս հեղինակներից Մորթեզա Մոթահարին է, սակայն, որ ամենից շատն է հղվում Իրանի ժամանակակից գենդերային դիսկուրսի շրջանակներում՝ որպես այդ դիսկուրսի վրա ազդեցություն

¹ Kanditoti D., Women, Islam and the state in Joel Beinin, Joe Stork, “Political Islam: essays from the Middle East report”, p. 185

² Shehadeh L.R., The idea of women under fundamentalist Islam, Florida, 2003, p. 5

³ Ziba Mir-Huseini, Islam and gender: historical roots for the contemporary debate, Princeton, 1999, p. 24.

գործած ամենանշանակալի հեղինակ⁴: Մույն հոդվածում կքննարկենք Մորթեզա Մոթահարիի «Հիջաբի մասին» գրքում տեղ գտած նրա տեսակետներն ու դրանց հիմնավորումները իսլամական հիջաբի մասին:

Հասկանալու համար Մոթահարիի՝ հիջաբի մասին գրելու դրդապատճառներն ու ժամանակի հրամայականը՝ նախ մի քանի տողով անդրադառնանք «հիջաբի» պատմությանը քսաներորդ դարի Իրանում:

Իրանը քսաներորդ դարի սկզբին արևմտյան արժեքների նմանակման, աշխարհիկացման ու կրոնի դերի նվազեցման քաղաքականություն էր որդեգրել⁵: Այս քաղաքականությունը, սակայն, լուրջ ընդդիմության էր հանդիպում կրոնավորների ու նրանց ազդեցության տակ գտնվող հասարակության պահպանողական շերտերի կողմից: Նրանց թիրախում էին հայտնվել հատկապես Ռեզա շահի վարած աշխարհիկ քաղաքականության գենդերային ասպեկտները, հատկապես 1936 թվականին ընդունված օրենքը, որով արգելվում էր հիջաբի կրումը⁶: Ոչ միայն «հիջաբի» խտրական ասպեկտները, այլև առահասարակ կանանց հիմնահարցերը բարձրաձայնողները ժամանակի աստվածաբանների կողմից մեղադրվում էին սեկուլյարիզմի ջատագով ու մոդեռնիստ լինելու մեջ, իսկ այդ հիմնահարցերի գոյությունը ժխտողներն իրենց տեսակետը հիմնավորում էին իսլամական ու ավանդապաշտական

⁴ Մույն տեղում, էջ 23:

⁵ Faghfoory M.H., *The Ulama-State Relations in Iran: 1921-1941*, *International Journal of Middle East Studies*, Vol. 19, No. 4 (Nov., 1987), pp. 413-432, p. 413

⁶ Chehabi H.E., *Staging the Emperor's New Clothes: Dress Codes and Nation-Building under Reza Shah*, : *Iranian Studies*, Vol. 26, No. 3/4 (Summer - Autumn, 1993), pp. 209-229, p.218

դիսկուրսներով⁷: Այս դիսկուրսների հիմնաքարն այն ընկալումն է, որ գենդերային դերերն ու դերակատարումները սահմանված են ի վերուստ, բնական են ու նախասահմանված Արարչի կողմից⁸: Այսպիսով, կանանց ավանդական դերի ու կերպարի տեսանելի ու իմաստային դրսևորումների պահպանումը համարվում էր ավանդապահության, նաև կրոնականության ցուցիչ, և հակառակը՝ կանանց դերի ու կերպարի փոփոխությունը՝ ավանդականից հեռանալու, արևմտամետության, մոդեռնացման արտացոլում⁹:

Իրանի Փահլավիական արքայատոհմի ներկայացուցիչները կնոջ հասարակական ու ընտանեկան դերն ու տեղը կապում էին հասարակության կարգավիճակի հետ և գենդերային քաղաքականությունը տեղավորում հասարակության զարգացման ու անկախության հայեցակարգերի սրտում¹⁰: Իսկ գենդերային դիսկուրսի ու քաղաքականության հիմնաքարերից մեկը համարվում էր «հիջաբի» ենթադիսկուրսը մի դեպքում սեկուլյարիզմի, մյուս դեպքում՝ իսլամականության համատեքստում:

Այս դիսկուրսի շրջանակներում տեսակետների բախում էր մի կողմից իշխող վերնախավի որդեգրած աշխարհիկ քաղաքականության, մյուս կողմից՝ աստվածաբանների համոզման միջև, որ իսլամից հեռացումը Իրանի հասարակությանը կտանի

⁷ Afary J., *Steering between Scylla and Charybdis: Shifting Gender Roles in Twentieth Century Iran*, NWSA Journal, Vol. 8, No. 1, Global Perspectives (Spring, 1996), pp. 28-49, p. 29

⁸ Zolghadr Kh., *Contemporary Gender Thought in Islam and Judaism: The Position of Women According to Ayatollah Morteza Mutahhari and Rabbi Joseph DovSoloveitchik*, available at http://spectrum.library.concordia.ca/977495/4/Zolghadr_PhD_F2013.pdf, (15.03.2014)

⁹ Afary J., *Steering between Scylla and Charybdis: Shifting Gender Roles in Twentieth Century Iran*, NWSA Journal, Vol. 8, No. 1, Global Perspectives (Spring, 1996), pp. 28-49, p. 29

¹⁰ Yeganeh N., *Feminist Review*, No. 44, *Nationalisms and National Identities* (Summer, 1993), pp. 3-18, p.4

կործանման¹¹: Երկու ծայրահեղական այս մոտեցումների կողքին 20-րդ դարի վաթսունական թվականներին Իրանում ծնվում ու այաթոլլահ Մորթեզա Մոթահարիի գրչով ձևավորվում է մեկ այլ մոտեցում, այն է՝ կանանց հիմնահարցերի բարձրաձայնում ու քննում իսլամի մոդեռնացման համատեքստում¹²:

Մորթեզա Մոթահարին ժամանակի ամենաազդեցիկ աստվածաբաններից ու փիլիսոփաներից մեկն էր, Իսլամական հեղափոխության առաջնորդ Ռուհոլլահ Խոմեյնիի մտերիմն ու «Հեղափոխական կոմիտեի» նախագահը: Առանձնահատուկ է Մոթահարիի դերը իսլամական դոկտրինի մեկնաբանության բնագավառում, ինչպես նաև Իրանի Իսլամական հեղափոխության գաղափարական հիմքերը կերտելու և այդ գաղափարները տարածելու գործում¹³:

Մորթեզա Մոթահարին միանում է Խոմեյնու կողմից դեկավարվող իսլամական շարժմանը 1963 թվականի հունիսի 6-ին: Նա ձերբակալվում ու ազատազրկվում է 43 օրով՝ ազատ արձակվելով հասարակական ճնշման արդյունքում միայն¹⁴: 1964 թվականին Խոմեյնիի աքսորից հետո ստեղծվում է «Կրոնավոր մոջահեդների հասարակություն» կազմակերպությունը, որի ակտիվ անդամներից մեկն է դառնում Մորթեզա Մոթահարին¹⁵: Միաժամանակ, նա հանդես էր գալիս նաև որպես Խոմեյնիի ներկայացուցիչ ու նրա գաղափարների տարածմանը հետամուտ

¹¹ Afary J., Steering between Scylla and Charybdis: Shifting Gender Roles in Twentieth Century Iran, NWSA Journal, Vol. 8, No. 1, Global Perspectives (Spring, 1996), pp. 28-49, p. 29

¹² Shehadeh L.R., The idea of women under fundamentalist Islam, Florida, 2003, p. 99

¹³ Dabashi H., Theology of discontent: The ideological foundation of the Islamic revolution in Iran, New Jersey, 2006, p.14

¹⁴ علی پناهی،خاطرات مرحوم حجت الاسلام موحدی ساوجی، مرکز اسناد انقلاب اسلامی،تهران

1381،ص141

¹⁵ سیری در زندگانی استاد مطهری، تهران، 1390 ص.126

գործիչ: Այս ընթացքում՝ վարչապետ Մանսուրի սպանությունից հետո, կազմակերպության մյուս անդամների շարքում նորից ձերբակալվում է նաև Մորթեզա Մոթահարին¹⁶:

1978 թվականին Մոթահարին ղեկավարում է իսլամական հեղափոխության ողջ գործընթացը՝ որպես Խոմեյնիի ներկայացուցիչ¹⁷: Ավելի ուշ նա միանում է Խոմեյնիի Փարիզում, որտեղ որոշվում է հեղափոխական կոմիտե ստեղծել՝ շարժումը ղեկավարելու համար: Մոթահարին շարունակում է իր աշխատանքը՝ որպես այդ կոմիտեի համակարգող ու Խոմեյնիի մտերիմ գաղափարակից նաև հեղափոխության առաջնորդի՝ Իրան վերադառնալուց հետո¹⁸: Մոթահարին սպանվում է 1979 թվականի մայիսի 1-ին՝ թողնելով ավելի քան երեսուն զիրք ու հողված:

Մորթեզա Մոթահարին մի շարք ազդեցիկ գրքերի ու հոդվածների հեղինակ է, բայց հայտնի է հատկապես իր՝ կանանց հիմնախնդիրներին նվիրված աշխատություններով¹⁹: Մորթեզա Մոթահարիի ստեղծագործություններն ու մոտեցումները շիական իսլամի՝ ադապտացիայի ճկուն մեխանիզմների ու հնարավորությունների վառ օրինակ են: Լինելով իսլամական իրավունքի հրաշալի գիտակ՝ նա կարողանում է ժամանակի պահանջներին համապատասխան վերլուծել ու նոր մոտեցումներ առաջ քաշել ժամանակակից հասարակության առջև ծառայած ամենատարբեր խնդիրների վերաբերյալ: Ալամե Թաբաթաբայիի «Փիլիսոփայության հիմունքներ և ռեալիստիկ մեթոդ» գրքի վերաբերյալ մեկնաբանություն գրելուց հետո նա իր պարտքն է համարում իր գործերում անդրադառնալ այնպիսի խնդիրների, որոնք արդիական են իր ժամանակի համար ու առաջնային՝ հատկապես

¹⁶ سیری در زندگانی استاد مطهری، تهران، 1390 ص. 130

¹⁷ Նույն տեղում

¹⁸ Shehadeh L.R., The idea of women under fundamentalist Islam, Florida, 2003, p. 101

¹⁹ Նույն տեղում:

Ժամանակի երիտասարդության համար²⁰: Այս համատեքստում է, որ նա անդրադառնում է նաև կանանց հիմնահարցերին, այն դեպքում, երբ իր ժամանակակից մյուս աստվածաբանների համար կանանց հիմնահարցերի բարձրաձայնումը կարևորությունից զուրկ ու հոգևորականի գրչին ոչ հարիր թեմա էր համարվում: Իր՝ «Հիջաբի մասին» և «Կանանց իրավունքներն իսլամում» գրքերում Մոթահարին տալիս է շիա իսլամի՝ կանանց նկատմամբ մոտեցումների համընդգրկուն նկարագրությունն ու մեկնաբանությունը: Պատահական չէ, որ նա համարվում է կանանց հիմնահարցերի վերաբերյալ շիա իսլամի մոտեցումների առաջամարտիկ մեկնաբանողը:

Մորթեզա Մոթահարին, բարձրաստիճան հոգևորական ու իսլամի նշանավոր կրոնագետ լինելով, համաձայնում է պատասխանել ժամանակի ամսագրերից մեկին՝ «Չանե ռուզ»-ին, որը կանանց հիմնահարցերը բարձրաձայնող հարթակ էր դարձել²¹: Այս ամսագրում Մահդավի Չանջանին մի շարք հոդվածներով հանդես գալով՝ առաջարկում էր փոփոխություններ մտցնել Իրանի քաղաքացիական օրենսգրքի մի շարք դրույթներում, որ վերաբերում էին ամուսնության ու ամուսնալուծության հարցերին: Այս առաջարկները հետագայում իրենց արտացոլումը գտան «Ընտանիքի պահպանության օրենքում»²²: Մասնավորապես՝ օրենքը բարձրացնում էր կանանց ամուսնության տարիքը, ամուսնալուծության դիմող տղամարդկանց պարտադրում դիմել քաղաքացիական դատարան և ամուսնալուծվելուց հետո երեխաների խնամակալության հարցը

²⁰ Նույն տեղում:

²¹ Ziba Mir- Hosseini, “Women and politics of fundamentalism in Iran” in “Women and politics in the third world”, p. 126

²² Ziba Mir-Hosseini, Islam and gender: Historical roots for the contemporary debate, Princeton, 1999, p. 24.

հանձնում էր այդ դատարանների քննությանը²³: Մինչ հասարակական տարբեր կազմակերպություններ ու քաղաքացիական ակտիվիստներ պայքարում էին օրենքի մեջ կանանց էլ ավելի մեծ հնարավորություններ ու ազատություններ ամրագրող դրույթների ավելացման համար, աստվածաբանները ահազանգում էին օրենքի հակաիսլամական ու «անբարոյական» լինելու մասին²⁴:

Այս ժամանակահատվածում է, որ Մորթեզա Մոթահարին ձեռնամուխ է լինում կանանց հիմնահարցերի՝ իսլամական համատեքստում վերլուծությանը: Խոսելով հիջաբի մասին՝ նա կիրառում է իջթիհադի մեթոդը՝ հիմնված ոչ միայն կրոնական աղբյուրների վրա, այլև հաշվի առնելով նաև ժամանակային ու տարածական համատեքստը²⁵:

Մոթահարիի համար կարևորվում է իսլամական հիջաբի «ծածկող», այլ ոչ թե «առանձնացնող, տարանջատող» գործառույթը²⁶: Պատահական չէ, որ նա իր աշխատության մեջ անդրադառնում է «հիջաբ» բառի նշանակությանը: Նա ընդգծում է, որ «հիջաբ» բառը պետք է հասկանալ իր «ծածկել», «քողարկել» իմաստով: Նրա գնահատմամբ՝ այս հանգամանքը խիստ կարևորություն է ստանում հատկապես այն համատեքստում, որ հաճախ հիջաբն ընկալվում է որպես կանանց՝ արտաքին աշխարհից առանձնացնելու, նրանց տանը պահելու և մեկուսացնելու միջոց²⁷: Ըստ Մոթահարիի, սակայն, «իսլամական

²³ Hinchcliffe D., The Iranian Family Protection Act, The International and Comparative Law Quarterly, Vol. 17, No. 2 (Apr., 1968), pp. 516-521.

²⁴ Ziba Mir-Hosseini, Islam and gender: historical roots for the contemporary debate, Princeton, 1999, p. 24.

²⁵ Codd R.A., A Critical Analysis of the Role of Ijtihad in Legal Reforms in the Muslim World, Arab Law Quarterly, Vol. 14, No. 2 (1999), pp. 112-131, p.114

²⁶ Ղուրանում «հիջաբ» բառը հանդիպում է 7:46, 33:53, 38:32, 41:5, 42:51, 17:45 և 19:17 այաներում:

²⁷ مرتضى مطهری، مسئله ی حجاب، تهران، 1391، ص.25

հիջաբն» ամեննին կոչված չէ նման գործառույթ կատարելու, փոխարենը այն ընդամենը ծածկում, քողարկում է կնոջ մարմինը հասարակության մեջ նրա նկատմամբ խտրական վերաբերմունքից զերծ պահելու համար²⁸: Խտրականությունն, ըստ Մոթահարիի, այն իրադրությունն է, երբ կինն ի ցույց դնելով իր մարմնի բարեմասնությունները՝ ընկալվում է որպես «սեքսուալության օբյեկտ» ու դառնում առևտրի առարկա արևմտյան հասարակություններում: Խտրականության մի այլ դրսևորում էլ, ըստ Մոթահարիի, կանանց՝ ցածր վարձատրվող աշխատուժը օգտագործելն է, ու այդպիսով կանանց շահագործումը արդյունաբերական զարգացում ապրող երկրներում²⁹:

Իր աշխատության մյուս բաժինները Մոթահարին նվիրում է «հիջաբի» ծագման ու դրա անհրաժեշտության մասին ժամանակին տարածված տարբեր տեսությունների մեկնաբանմանն ու դրանց մերժմանը:

Այս տեսությունները, այս կամ այն պատճառը հիջաբի կիրառման հիմքում դնելով, հնարավորություն են տալիս ցույց տալ հիջաբի կիրառման ժամանակավրեպությունը՝ նշված պատճառների բացակայության արդյունքում: Այլ կերպ ասած՝ եթե որևէ տեսություն հիջաբ կրելու անհրաժեշտությունը կապում է որևէ երևույթի հետ, որ գոյություն ուներ անցյալում, բայց այլևս անհետացել է, ապա անհետանում է նաև հիջաբ կրելու անհրաժեշտությունը:

Մոթահարին, հետևաբար, իր նպատակն է համարում ցույց տալ այս տեսությունների անհիմն ու շինծու լինելը և բերում հիջաբի կիրառման այլ պատճառներ, որոնք վերժամանակյա բնույթ ունեն, հավերժական են ու անփոփոխ: Դրանցից

²⁸ Նույն տեղում, Ներածություն

²⁹ Նույն տեղում, Ներածություն

ամենակարևորը բարոյական հասարակություն ունենալու ձգտումն է, և կնոջ մարմնի ծածկված լինելը՝ որպես բարոյական հասարակություն ունենալու ամենակարևոր գրավականներից մեկը:

Ներկայացնելով հիջաբի ծագման վերաբերյալ փիլիսոփայական, սոցիալական, բարոյական, տնտեսական ու հոգեբանական տեսությունները՝ Մոթահարին փորձում է ցույց տալ, որ դրանցից և ոչ մեկը «իսլամական հիջաբի» կիրառության հիմնաքարը չէ: Այսպիսով, Մոթահարին ընդգծում է իսլամի ու իսլամական համայնքի՝ «ուսմայի» առանձնահատուկ լինելը, դրանք այլ կրոնների ու համայնքների ավանդույթների ու սովորությունների հետ համեմատելու անհնարիությունը:

Փիլիսոփայական տեսության համաձայն հիջաբը ծագել է հոգևոր կամ կրոնական վարժանքների, ասկետիզմի արդյունքում: Ըստ Մոթահարիի, սակայն, այս մեկնաբանությունը անհամատեղելի է իսլամի դրույթների հետ, որը չի ընդունում ասկետիզմն ու աշխարհիկ, մարմնական վայելքներից հրաժարվելու գաղափարը³⁰:

Սոցիալական տեսության համաձայն՝ հիջաբի դերը կանանց անապահովությունից, սոցիալական անարդարությունից պաշտպանելու, անվտանգություն շնորհելու մեջ է: Բայց Մոթահարին պնդում է, որ իսլամի շնորհիվ և՛ կանայք, և՛ տղամարդիկ ունեն անհրաժեշտ անվտանգության գրավականներն ու չունեն սոցիալական անարդարության խնդիր, քանզի բոլորը հավասար են Ալլահի առջև³¹:

Տնտեսական դիրքերից ելնելով՝ հիջաբը մեկնաբանում են՝ որպես հայրիշխանական հասարակության ու կանանց շահա-

³⁰ مرتضى مطهرى ، مسئله ی حجاب، تهران، 1391، ص.32

³¹ Նույն տեղում, էջ 42

գործման գործիք: Մոթահարին, սակայն, պնդում է, որ իսլամական ումմայում չկա ու չի կարող լինել կանանց շահագործում³²:

Բարոյագետները պնդում են, որ «հիջաբը» տղամարդկանց եսակենտրոնության ու խանդոտության արդյունք է: Այս երկու հատկանիշներն էլ ընդունելի չեն իսլամական աստվածաբանության կողմից ու մերժելի յուրաքանչյուր մուսուլմանի համար: Հետևաբար Մոթահարին անհիմն է համարում այս տեսակետի գոյությունը³³:

Հիջաբի մասին հոգեբանական տեսությունն էլ ասում է, որ այն անհրաժեշտ է հատկապես կանանց՝ դաշտանի ժամանակ անպաշտպան ու ընկճված լինելու պատճառով³⁴:

Այս բոլոր տեսությունները մեկ առ մեկ մեկնաբանելով՝ Մոթահարին ցույց է տալիս, որ իսլամական հիջաբը բարոյական հասարակություն ունենալու գրավականներից մեկն է ու թեև ունի իր ռացիոնալ բացատրությունները՝ հիմնավորված գիտական տեսություններով, բայց իսլամի համատեքստում այլ՝ ավելի կարևոր գործառնություններ է կատարում³⁵: Ուշագրավ է, որ հիջաբի մասին խոսելիս Մոթահարին անդրադարձ է կատարում ավելի շատ տղամարդկանց խառնվածքին ու էությանը, քան կանանց: Ըստ նրա՝ տղամարդիկ անհագ ու անկուշտ են ինչպես հարստություն կուտակելիս, այնպես էլ սեռական վայելքներ փնտրելիս: Տղամարդիկ Մոթահարիի գրչով ներկայանում են որպես սեփական բնագոյները կառավարելու անընդունակ, թույլ ու շուտ գայթակղվող էակներ, որոնց անհրաժեշտ է պաշտպանել իրենց իսկ բնագոյներից: Եվ այս պաշտպանողների դերում հանդես են գալիս հիջաբով կանայք, ովքեր, իրենց բարեմասնությունները

³² Նույն տեղում, էջ 51

³³ Նույն տեղում, էջ 53

³⁴ مرتضى مطهرى ، مسئله ی حجاب، تهران، 1391، ص. 59

³⁵ Նույն տեղում, էջ 77

թաքցնելով, տղամարդկանց ապահովագրում են անօրինական կապերի մեջ մտնելու ձգտումից: Այսպիսով, իսլամական հիջաբը Մոթահարին ներկայացնում է որպես կնոջ ու տղամարդու միջև սեռական կապերը ընտանիքի շրջանակում սահմանափակելու, պահպանելու գործիք³⁶: Ու քանի որ ընտանիքի ամրությունն ու երկարակեցությունն էլ համարվում է իսլամական հասարակության հիմնաքարերից մեկը, հիջաբը վերածվում է իսլամական հասարակության գոյատևման ու պահպանման կարևորագույն գրավականի:

Հիջաբի մասին Ղուրանում տեղ գտած այաթներին անդրադառնալիս Մոթահարին ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ հաճախ իսլամական հիջաբի մասին խոսելիս մեջբերում են Ղուրանի այաթներից մեկը միայն՝ այն համատեքստից դուրս հանելով³⁷: Այնինչ, ըստ շիա աստվածաբանի, չափազանց կարևոր է այդ այաթը համատեքստում դիտարկելն ու հատկապես նրան նախորդած այաթները մեկնաբանելը: Իսկ այդ այաթները վերաբերում են կանանց ու տղամարդկանց՝ իրենց հայացքները խոնարհ պահելու և միմյանց վրա ակնդետ չնայելու պատգամին ու միմյանց տուն այցելելիս նախօրոք զգուշացնելու, դուռը թակելու և բարձրաձայն տանտիրոջը կանչելու հորդորին: Այս այաթների համատեքստում հիջաբի մասին այաթը քննելիս Մոթահարին նպատակ ունի ընդգծելու, որ հիջաբի դերը ոչ ազգական (ոչ «մահրամ») տղամարդկանց ու կանանց միջև չթույլատրված ցանկությունների առաջացումը խոչընդոտելն է: Նույն այս նպատակին են ծառայում նաև Ղուրանով պահանջված

³⁶ مرتضى مطهرى ، مسئله ی حجاب، تهران، 1391، ص. 81

³⁷ Խոսքը վերաբերում է Ղուրանի 24- 31 այային, որտեղ ասվում է. «Եվ ասեք հավատացյալ կանանց, որ խոնարհ պահեն իրենց հայացքները և ծածկեն իրենց «զարդերը» բացի նրանցից, որ բնականորեն տեսանելի են.....»

«խոնարհ հայացքներն» ու նախօրոք տեղեկացված այցելությունները միմյանց բնակարան:

Իսլամական հիջաբի մյուս դերակատարումը կապված է հասարակական կյանքի առողջացման ձգտման հետ: Ըստ Մոթահարիի, երբ մարդու սեռական կյանքը տարանջատված է նրա հասարակական գործունեությունից, հասարակությունն ավելի արդյունավետ ու բեղմնավոր է դառնում: Իսկ այդպիսի հասարակություն ունենալու համար անհրաժեշտ է հիջաբի կիրառությունը: Մոթահարին ընդգծում է, որ առանց հիջաբի հասարակության մի հատվածը վերածվում է պճնված, զարդարված տիկնիկների, իսկ մյուս հատվածը՝ իր կամքի ուժը կորցրած, միայն տռփանք փնտրող արարածների³⁸:

Հատկանշական է, որ հիջաբ կրելու պարագայում Մոթահարին իսլամի տեսակետից ընդունելի է համարում կանանց մասնակցությունը ամենատարբեր հասարակական ու քաղաքական բնագավառներում: Ավելին՝ աստվածաբանը իսլամական հիջաբը համարում է միջոց՝ կնոջ վերոնշյալ իրավունքները կյանքի կոչելու համար³⁹:

Այսպիսով, ըստ Մոթահարիի՝ իսլամական հիջաբը ոչ թե ոտնահարում, այլ պաշտպանում է կնոջ իրավունքները, ոչ թե մեկուսացնում, այլ օգնում է ինտեգրվել հասարակությանը, ոչ թե ստորացնում, այլ նրան պաշտպանում է ստորացումից: Մոթահարիի գործերն առհասարակ ու կանանց հիմնհարցերին նվիրված աշխատությունները մասնավորապես, շատ մեծ ազդեցություն են թողել ինչպես իսլամական հեղափոխության, այնպես էլ Իրանի իսլամական հանրապետության՝ կանանց հանդեպ վարվող քաղաքականության վրա: Նրա գործերի

³⁸ مرتضى مطهری ، مسئله ی حجاب، تهران، 1391، ص. 84
³⁹ مرتضى مطهری ، مسئله ی حجاب، تهران، 1391، ص. 201

քննությունն, ուրեմն, օգնում է բացատրել այն պարադոքսալ ֆենոմենը, որ գոյություն ունի Իրանում. աստվածապետական պետություն լինելով՝ Իրանը զարմանալի բարձր ցուցանիշներ ունի հասարակական ու քաղաքական, մշակութային ու տնտեսական բնագավառներում կանանց մասնակցության առումով:

HIJAB BY MORTEZA MOTAHARI

Summary

Anna Gevorgyan

The issue of Islamic hijab (veil) is highly contested in contemporary Muslim world. While westerners accuse Muslims and Islam in gender discrimination and mention the hijab as a symbol of it, many Muslims believe that hijab is empowering women in their societies. Being one of the ideologues of the Islamic revolution of Iran Morteza Motahari has written a book entitled “The question of hijab” at a time when Iran was trying to build a secular state and when the hijab was a sign of backwardness and ignorance. His arguments concerning the necessity of the hijab for the just and moral society had a great impact on politics of newly established Islamic republic of Iran concerning women’s issues and still have impact on gender politics of modern Islamic republic. In this article a content analyses of the above mentioned book of Motahari is made in order to understand why and how he managed to present the Islamic hijab as a powerful tool for emancipation of Muslim women, for productive society and happy family.